

# ԲԱԶՄԱՎԵՊ

## ՀԱՆԴԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ

### ՀԱՆԴԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ԵՐԵՄՆԱՄԵԱՅ ՊԱՏԵՐԱՁՄ Ի ՀԱՅՍ ԵՒ ԿԱՏԱՐԱԾ ԱՐԺԱԿԱՅ ԱՐԳԱՅԻՆ

(ԴԱՐ ՀՈՐԻՇԻ)

Հայաստանեայց փանգիռն գրեթէ  
միշտ ցաւալի ու աղիտաբեր եղանակ-  
ներ հնչած է՝ ի լսելիս մեր, միշտ ողբալի  
կեղերջանք կ իրնաս, հայ հագներդու,  
երևակայել արդեզք անկապ և անցդիթայ  
հայ մը, որ չողբայ տխուր աւերակներ.  
կարդա զգիրս, տես զիշատակարանս,  
ամենքն նոյն ցամ կը կրկնեն: Եթէ  
մատենիք, եթէ իշխատակարաններով  
գոհ չես, գնա փորէ զհայաստան, և  
ուրիշ բան չես գտներ՝ բայց թշնամի  
ձեռքէ պահուած և ապրեցուցած գան-  
ձեր, կտոր բրդուճ նշմաներ և նշխար-  
ներ, զորս արդէն գելցիկ ստորագրած  
են ազգային մուսայներ: Բայց կ'ուզեմ  
այսօր յիշեցնելքեզ, հագներդու, պատ-  
մութեան ուրիշ ողբալի էլ մը, որուն  
նման կարծեմ հայ պատմութիւնն ալ  
ուրիշ չի յիշեր: ցաւալի ամենայն կող-  
մէ՝ բայց և լի փառօք հայկական բազ-  
կաց և սրտից ՌԱ կեղծիկ և ոչ առաս-  
պելպիտի հիւսեմ: այլ պատմութիւնն մը՝  
զոր վկայեն քեզ և օտարք: զոր թէպէտ  
քաջ պատմագիրք մեր յիշած են, բայց  
ոչ այն անուամբ: ծանօթ է իրն, այլ  
ոչ և անունն — երեսնամեայ պատե-

րազմի: — թերես յիշես մեզ մօտաւոր  
ուրիշ հոմանուն դէպք մը — երեսնա-  
մեայ պատերազմ, — որուն կատա-  
րածն եղաս վեսթֆայեան գաշինքն.  
բայց մերոյս կատարածն կնքեց ձախող  
բանտարգելութիւնն Արշակայ:

Այն պատերազմն եղաւ երեսուն տա-  
րի. նախ գերմանական՝ յետոյ փոխե-  
ցաւ ՚ի համախարհի Եւրոպական. իսկ  
մերս՝ երեսուն և երկու տարի, միշտ  
Հայ-Պարսիկ, և ոչ երրէք տարածուե-  
ցաւ յընդհանուրս: այլ երկու սուրերն  
միշտ զիրար մաշցուցին անհնարին ո-  
խութեամբ և ատելութեամբ: Եթէ  
պարսկական խարդախ ու անպիտան  
նենդաւորութիւնն զօրանար՝ հայսուրն  
անշուշտ միշտ յաղթական պիտի ըլլար.  
և եթէ հայ ազգն ինքն զինքն չի կըծէր,  
գեռ յոտից վրայ կայսած կրնայինք  
տեսնել զանիկայ յաղթ բազուկներով,  
և կրնայինք գոչելթէ կեցցէ հայ սուրն,  
որ յաղթեց Պարսկական ամբարտաւա-  
նութեանն: Աւակայն ոչ, հայ սուրն ընկ-  
նեցաւ, և բեկաւ իսկ. Հայաստան գե-  
րեցաւ, և կտրին հայ Աքիլլեսն իր  
մորթն տուաւ Պարսից խաղալիկ, և էր

ինքն վասակ , զոր յոյնք կոչեցին վասիկիոս : կարծես թէ բազմամեայ ոխերիմն Հայոց Շապուհ՝ Տիրանայ վրէժինդութեամբն յագեալ ուղեց խաղաղութեան դաշինք դնել ընդ Հայս և ընդ Արշակ . կանեց զլլրշակ՝ ի գուռն , և նա իր Վասական դնաց : Բայց միշտ կասկածուս էր Շապուհ որ չըլլայ թէ Արշակ աւելի իր կրօնակցաց ձեռք տայ , որ էին մերձաւոր թոյնքն , ասոր համար ստէպ կը կրկնէր , երդումն կը պահանջէր յԱրշակայ որ հաստատուն կենայ ու իրմէ չբաժնուի : Ահա այս սարսափեի կնճիռն էր , որ միշտ զՀայս հասուց ՚ի վտանդ կործանման . Յոյնք մէկ կողմէն կրօնիք Հայոց մերձաւորք՝ հարկաւ աւելի ազգեցութիւն պիտի ունենային մերայոց վրայ . իսկ ընդհակառակն Պարսիկը միշտ զՊուեցուցին զՀայս իրենցմէ՝ իրենց պիզդ պաշտամամբքն . կրօնք մը՝ որ ոչ երբէք կրնար համակրութիւն ունենալ ընդ Քրիստոնէութեան , որով և նոյն կրօնից պաշտոնեայքն գարշ էին , ոչ միայն իրենք այլ և իրենց լեզուն և ուսումն : Եւ քանի որ այս հակակրութիւնն կար այն երկու ազգաց մէջ անհայտ թշնամութիւնն պիտի չվերջանար . անոր համար միշտ կը վախէր Շապուհ , « և ոչ հաւատացր նմա՝ թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն , և կացցէ յուխտին միաբանութեան ընդ նմա » : Սակայն և Հայք սովորած էին Պարսից այս խորամանկութիւնն . և երբ ՚ի Պարս Շապոհայ առջն ուխտ և երդումն կ'ընէին , իրենց տանը մէջ բոլորովին ուրիշ ձայն և ուրիշ գործ կը ցուցընէին :

Ո՞ն է ուրեմն մեր այս համբաւաւոր երեսնամեայ պատերազմն , զոր Արշակ անընդհաա կռուեցաւ ընդ Պարսիկս իրեն քաջ Վասակ զօրավարին ձեռքօք : Կարգաւ կը պատմէ զայն թիւզանդ պատմին , որուն խօսիցն աւելի արժան է հաւատալ այս տեղ քան մեր Խորնոյ ծերունոյն : Վասն զի թիւզանդ Հայոց սրոյն գործած հրաշալիքն կը պատմէ , իսկ Պատմահայր ծերունին ուրիշ աղբերաց կը գիմէ , և չի բերեր

հայ արքունեաց յիշատակարաններն : Բայց թիւզանդ գաղտնի դիւաններն կը բանայ առջեղ . և տես այն յիշատակարանաց գառն էջ մը՝ զոր կնքած էին Պարսը ընդ Թոյնս , ո՞ գիտէ թէ Հայք տեղեակ էին այդ խորամանկ խարդախութեանն . և գրուածն այսպիսի անձոնին պայման մ'էր . « գրեալ էր յուխ . և այս նամակին այսպէս . Ետու քեզ « զնծրին քաղաք՝ որ է յԱրուեստանի , « և զՄիջազեսս Ասորոց . և մէջաշ . և խարհին Հայոց ձեռնթափ եմ , թէ և կարասցես յաղթել նոցա և արկանել « ՚ի ծառայութիւնն , ես ՚ի թիկունս ոչ « եկից նոցա » : Այսպիսի անհեղեղ խորամաննելութիւնն մը կը չնայ թիւզանդ . արդարացնել ըսելով թէ և ՚ի նեղին վշտի՝ զայս ձև օրինակի բանիցն կնքէր մուրհակ , և տայր թագաւորին Պարսից , և ապա ճողովրէր ՚ի նմանէ » . բայց զու մի հաւատար , վասն զի գաշանց գրոյն յոյն էր՝ Հայոց արեան ծարաւի . թերեւս ինքն ալ քիչ մը երկիւղ ունէր ՚ի Պարսից :

Տիրասէրք էին Հայք , կը զարմանայ երբեմն և ինքն Շապուհ թէ ինչպէս առիւծաբար կը կռուին Հայք իրենց մեռած թագաւորին արեանն վրէժինդութեան համար : Սակայն գրժարդաբար ինչպէս ուրիշ անգամներ , ոյս անգամ ալ անօրէն մը ՚ի Հայոց՝ Մերուժան անունով՝ Պարսից կրօնքին կը զիմէ և կը սկսի իւր ազգին գէմ կռուիլ անկարգաբար . և մեծ չարեաց պատճառն ինքն կ'ըլլայ այս անդադար երեւնամեայ պատերազմաց : Ինքն առաջնորդ անցած կը վաղէ ՚ի Տիգրանակերտ , կ'աւրէ կ'աւրըշալէ , թագաւորաց ոսկերներն կը հանէ կը ցրուէ սրբապիղծ անկրօնութեամբ . այս է թիւզանդայ պատմածն . բայց տես թէ որչափ զայն կ'այլակերպէ ֆերմուզայը Արշակն Մովսէս խորենացի . կը ձեւացընէ որ Շապուհ նախ նամակ մը յուղարկած ըլլայ ՚ի Տիգրանակերտ այսպիսի ոճով . « Մազգեղանց քաջ Շապուհ արքայից և արքայ , Տիգրանակերտեայ՝ որք ոչ

« և էք անուսանելոց 'ի մէջ Արեաց և  
« Անարեաց :

« Ես կամէի 'ի ձէնջ սկսեալ յամե.  
« Նայն առաջիկայ քաղաքս խաղաղու.  
« թեամբ և քաջօրէն աղատութեամբ  
« զմուտն առնել. և եթէ գուք Տիգրա.  
« Նակերտեայք, որ առաջին էք, ոչ  
« շահատակութեամբ ասեմ, այլ 'ի  
« մտէ ուղեռութեանս ընդդէմկացէք  
« ինձ, 'ի ձէնջ ուսցին և այլք զդոյն առ.  
« նել: Այլ 'ի գարձին մերում բարկու.  
« թեամբ այնակս վանեցից զձեզ, զի  
« կրկին եղիչիք օրինակ խեռեալ ստա.  
« Հակելոցն »:

Գեղեցիկ նամակ մը կ'երևայ այդ  
արտաքինտեսալեամբ զոր կը բերէ Խո.  
րենացին (Պ. իդ.), բայց մի հաւատար,  
վասն զի ոչ է 'ի դիւանաց արքունի. և  
Շապուհ և ոչ իսկ յերազեր է թերես  
այդպիսի նամակ մը գրել առ Հայո,  
այլ աւելի ճարտարութեամբ յանկար.  
ծակի ուզած է ըմբռնել զշայս իսկ այդ  
նամակն բանաբարդութիւն մ'է զոր գոր.  
ծած է մերս խորնյ ծերունին ամեննեին  
անվաներական և շինծու գրքէ մը. ե.  
րանի ինչ երոդոսոսէ մը կամ Տիտոս  
Լիւիոսէ կամ Տակիտոսէ մը քաղած ըլ.  
լար. իսկ զայդ 'ի խերշետանաց ժող.  
ված է: Որովհետև խորենացին շատ  
հմուտ է անվաներական գրոց, ուզած  
է այս տեղ ալ բոլորովին աննշան գրքէ  
մը փոխ առնուլ. բայց ինչո՞ւ արդեօք  
նոյն գիրքն անձամբ թարգմաներ է  
կամ յետոյ կամ յառաջ քան զիւր պատ.  
մագրութիւնն: Վասն զի ինքն կը սիրէ  
զլլիքսանդրի աշխարհակալութիւնն,  
և շատ տեղ կը յիշէ: Արդ Մակեդոնա.  
ցին՝ Տիւրոսի մեծահռչակ քաղաքին  
վրայ երթալով պատերազմաւ, նախ  
նամակ մը կը զրէ առ Տիգրացին.

« Թագաւոր Աղեքսանդրոս . . . և մեծ  
« ինքն թագաւոր Եւրոպայ, Ասիայ և  
« Լիրիայ, Ծուրացւոց որք ոչ ևս են  
« ասէ :

« Ես սկիզբն արարեալ յԱսորւոց յազ.  
« զըն կոյս հանդերձ խաղաղութեամբ  
« և քաջօրէն աղատութեամբ կամէի  
« զմուտն առնել: Եւ եթէ գուք Ծուրա.

« յիքդ՝ որ քաջ առաջին էք, ոչ քաղա.  
« քավարութեամբ ասեմ, այլ իմոյ ու.  
« զւորութեանս ընդդէմ կայք ինձ, 'ի  
« ձէնջ ուսցին և այլք զօրութեան որ.  
« շափ կարեն Մակեդոնացիք, առ ձեզ  
« կրեալ ընդպղեալ ամբարտաւանու.  
« թեանդ . . . »:

Եթէ այշափով գոհ ըլլար մերս Խո.  
րենացի՝ թերես անմեղադբելի ըլլար.  
բայց նոյն օրինակութիւնն շարունակե.  
լով և նոյն օճով Տիգրանակիրտի ա.  
ռումն նկարագրելով՝ պատմական ճըշ.  
դութենէ գուրս կ'ելլէ. և կերպով մը  
մեզի ստուգել կու տայ թէ ինչո՞ւ մեր  
հարքն և նախնիքն իր ժամանակն չեն  
ընծայած հաւատք իրեն գրքին:

Ի՞նչ է և այն զոր Ղաղար Փարապեցին  
իր առ Վահան Մամիկոնեան թղթոյն  
մէջ կը յիշէ մեր ազգին վկայութիւնն,  
զոր անշուշտ կարգացած ես: Կարգաւ  
յիշատակելով Հայոց արեղայից առ  
ստորս և առ զիտունս ըրած թշնա.  
մանքն կ'ըսէ. « Երանելի Փիլիսոփոսն  
Մովսէս, (անշուշտ մեր խորենացին  
կ'իմանայ), որ արդարն մինչդեռ էր 'ի  
մարմնի՝ ցանկ երկնային զօրացն էր  
քաղաքակից, ոչ ապաքէն 'ի տեղունջէ  
'ի տեղի արեղեանդ Հայոց հալած ական  
արարին: Ոչ զուշացրոիլ և գողի.  
տահալած զդրեանն նորա՝ առ անգի.  
տորեան Փարապիկէ կոչէին: »

Որպէս զի բոլորպին ստուգենք թէ  
խորենացին այլայլած է կերպով մը  
հայկական պատմութեան այս աւանդը,  
տես թէ ինչպէս կը ստորագրէ նաև  
բովանդակ պատերազմին դէպքը ու  
նկարագիրը, օտար 'ի բիւզանդայ պար.  
զութենէ. բայց ոչ ինքն հեղինակն է որ  
կը խօսի, այլ իւր անվաներական աղ.  
բիւրն: Պատերազմին կերպն ու գոր.  
ծիներն անգամ յունական են. կրնայ  
ըլլալ որ Հայք ալ զնոյնս գործածէին,  
սակայն նկարագիրն անհաւատալի կ'ը.  
նէ մեղ բոլոր պատմութիւնն :

Խորենացւոյն Երրորդ գրոց քսան և  
ութերորդ զլուխն բովանդակ Տիգրա.  
նակերափ առման և քանդման նկարա.  
գիրն է, նման ամեննեին թերէի առ.

ման՝ զոր կը ստորադրէ Սուտ կալիս-  
թենէս մը, որուն յոյնն և հայերէնն ալ  
ունինք չափաւոր հնութեան կերպա-  
րանօք, բայց ոչ այն հնութեամբ՝ զոր կը  
կարծեցնէ զրոց անունն — Պատմու-  
թիւն Աղեքսանդրի — զրոշմելով՝ Քննա-

թամք որչափ հաւատք ընծայեն այդ  
զրոց, նոյնչափ և ոչ աւելի թերևս Տի-  
գրանակերտի նկարագրութեանն ցես-  
սենք նախ Խորենացւոյն վիպասանու-  
թիւնն, որուն դիմաց նա և Աղեքսան-  
դրի զթենք առնուլ :

### Առամեն Տիգրանակերտի :

« Խակ Շապուհ եկեալ ՚ի Տիգրանակերտ,  
զարձեալ աղխեցին ընդգիւմանալ և եկեալ ՚ի  
պարիսպն աղզակէին։ Գնա ՚ի մէնջ, Շա-  
պուհ, զի մէ չարիս յերիդրդումն ընդ քեզ  
առաւել ևս քան զատամինն անցուցանի-  
ցեմք պատերազմաւ, Եւ նա պատասխա-  
նեաց. Ո՛վ քաջք ՚ի Հայոց, որք զանձինս  
արգելեալ փակեցէք ընդ Տիգրանակերտի  
պարսպովք, և արտաքը ձայն արկանէք  
սպառնալեաց. Զի քաջ արանց է յարձակ  
զաշու և յազատ սենք կոռուել, և կա-  
նանց գործ է արգելուով փակել զինքնանս  
յերկիւղէ առ հանգերձեալ կոփիւն։ Եւ  
զայս սասացեալ զարձաւ առ զերեալ Բյոն-  
սըն զիմաւորս, ասէ. Եթէ ձերով մարտիւ  
առից զայս քաղաք, զամենեսեան զձեզ ա-  
րարից պատս հանգերձ ընտանեօք ձե-  
րովք; Եւ պարսկական զօրուն շուրջ գքա-  
զարան հրամայեաց ընթանալ, և նետիք  
խոցուցել զ՚ի վերաց պարսպին։

Եւ Յունացն մատուցեալ մեծաւ բոնու-  
թեամբ յեցուցին ՚ի պարիսպն վլուցեցալ  
էշն։ Եւ է այս գործի մեքենայից անուա-  
ւոր, յերից երից արանց մլերով տարեալ,  
և ՚ի ներքուտս կացնովք և սակրօր երկրե-  
րանովք և կտցաւոր մրճովք փորել զէի-  
մունն։ Եւ նզախարիսար արարեալ զայն,  
որ՚ի հայկազնոյն Տիգրանայ հօնեալ և յար-  
մարեալ որմունքն, յախեալ ընկեցին։ Եւ  
հուր՚ի գորունն է յամենայն կողմանն վա-  
սեալ, և քարինք և նետք յարձա-  
կեալ լինէին, և խոցուտեալ մերքն յապուշ-  
դառնային։ Եւ ՚ի ներքս մտեալ բոլոր զօրին,  
և մեռն պարսկական ոչ վաստակէր զրազ-  
մախովիսող երկաթն արեամբ արրուցա-  
նել, մինչև ապաժոյ սպանելոցն լցեալ ՚ի  
հիմունն ծաւաքէր։ Այլ յունականն ձեռն  
՚ի քթել ական հրծիգ առնէր զամենայն  
փայտակերտան։ Եւ Շապուհ զիմացեալսն ՚ի  
կոստրածէն գերեալ, չուէ ՚ի Պարսս, և  
հրեշտակս առ որ ՚ի Հայոց գունդք առա-  
քեալ, անպայազատ զՄինեացն հրամայէ  
առնել զտոհմ։

### Առամեն Թիգրայ:

Աղեքսանդրոս առեալ զօրսն և ճանա-  
պարհաւ անցեալ գնաց ՚ի Թերայիս, և  
խնդրեաց ՚ի նոցանէ զինուորս քաջա արս  
չորս հապար և զիարիկն, Եւ Թերայեցիքն  
ախսեցին զգրունսն, և ոչ հրեշտակ անզամ՝  
առարեցին առ նա, այլ գէմ յանդիման ճա-  
կատեալք զինեցան ընդգէծ Աղեքսանդրի։  
Եւ եկեալ ՚ի վերաց պարսպին զինուորք հինգ  
հարիւր ձայնեցին առ Աղեքսանդր և ասեն.  
Եթէ համ պատերազմ տուր կամ ՚ի քաջ  
ունի ի քաղաքէս, Եւ Աղեքսանդրոս ծիծա-  
ղեալ պյասիէս ասաց. Ո՛վ քաջ Թերայեցիքք,  
զի արգելեալ փակեցիք զնեզ ՚ի ներքս ՚ի  
պարսպիդ և արտափոյ հրաման տայք  
կռուել, ... (Արդ գուր զանձինս արգելեալ  
փակեցիք ընդ պարսպօք, և արտաքը յօ-  
դական ձայն արկանէք). քանզի քաջաց ա-  
րանց է յազատ և յարձակ դաշտի կռուել,  
և կանանց գործ է արգելուով և փակել զին-  
քեանս յերկիւղէ առ հանգերձեալ կոփիւն։

Զայս սասացեալ հրամայեաց կազար հե-  
ծելց շուրջ ընթանալ արտաքը զքաղա-  
քաւուն և նետիւք խոցուտելի վերաց պարսպ-  
պացն. և այլ հազար զօրականաց հրաման  
ետ կացնօր և երկսայր սայցօր և երկայնա-  
հատ մրճօր և երկայնագոյն նգօր փորել  
զիմունն։ Եւ զայն որ յԱմիկիոնայ և ՚ի Զե-  
թոսէ (Վինոսէ ?) եղբարց ՚ի քնարէ յար-  
մարեալ պատկանեցան քարինքն, նզախար-  
խար առնելով ՚ի վայր արկանել. և կոչե-  
ցել ինյամ մեծաւ. բոնութեամի յեցուցա-  
նել առ պարսպացն քահուսունն։ Եւ է այս  
գործի մեքենայի անուաւոր յերից զինուո-  
րաց բռնի մղերով տանել, և ՚ի հեռուստ  
արձակեալ լինի առ պարիսպն, և զիւրաւ  
յանդուցն յարձակմակ զիարի քաջ հո-  
ծեալս և զյարմարեալ որմունս ՚ի բաց քա-  
կեալ ընկենուու, Եւ լինքն այլ ևս հազար  
պարսպաւորս սպանանելով ՚ի բաց բրել ըն-  
կենուու զթերաս չուրջ գայր ամենայն ու-  
րեք. հուր սուր և քարինք և նետք և տէք  
զգեալ լինէին ՚ի քաղաքն, բայց ձեռն կար-  
կաս մակեգոնական ոչ վաստակէր զրազ-  
մախովիսող երկաթն արեամբ արբուցանել.  
անօդնականք Թերայեցիքն մտօք Կոյրք, յԱ-  
ղեքսանդրի կորուսեալք լինէին . . .

Դառնանք մենք տեսնել մեր Երեմնա  
մեայ ճակատամարտին շարունակու-  
թեանը :

Յետ Տիդրանակերտի առման և քանդ-  
մանն ՚ի մեծ ծոփս արշաւեցին Պար-  
սիկը. անյագ սուրն ոչ միայն զիենդանիս  
կը լափէր, այլ և մինչև յուկերս թագա-  
ւորացն Արշակունեաց կը ուղանայր. Աս-  
պատակ մ՛էր կատարեալ, որոն հըր-  
գեհն հասաւ մինչև ՚ի բերդն Անի ՚ի  
Դարանադիս, ուր կար Սանատորուկ ար-  
քային գերեզմանն ՚ի հնուց մնացեալ,  
մեծդի և անհետեգ շինուածք : Աւեր-  
մունք և կործանմանք սկսան անընդ-  
հատ շարունակել, և վասակայ սուրն  
անխոնչ կը քայլէր, և շատ անգամ  
գիւցաղնաբար քաջութեամբ: կը միշտ  
զՊարսս, կամ մազապուր զգիխաւորն  
կամ զայն ևս սպաննելով: կ'ասպատակէ  
Շապուհ և ՚ի Թաւրէշ, բայց այն տեղ  
ալ Հայն կը զօրանայ Ալանաց զօրգքն .  
յետ պարտութեանն Շապէոյ և ՚ի Թաւ-  
րէշ չի գադրիր և չի յոդնիր Պարսիկ  
սուրն . և մի առ մի զանազան նուի-  
րակը բիւրաւոր զօրգք, (եթէ հաւա-  
տափ համարինք բիւզանդայ յիշած թի-  
ւերն) միշտ կը յարձակին և միշտ կը յաղ-  
թուին, կատազութիւնն կը մոլեզնի առ  
Պարսիկ՝ բայց ՚ի զուր. արեսեան կո-  
րովն այս անգամ ահաւոր կ'երեցնէ  
հայկեան սուրը : Տես զոր կը թուէ մի  
առ մի մերս Բիւզանդ այն ամեն զօրա-  
վարներն որ անհամար զօրգք կը յարձա-  
կին ՚ի Հայս, և միշտ արթուն գտան  
զՄըշակ և զվասակ ՚ի վանումն : Գիտ-  
ցան առ ժամանակ մի զգուշանալ և  
փախուստ տալ Պարսից զարանադործ  
հրաւեկներէն . երանի թէ զնոյնն մինչև  
ցվերջ շարունակէին :

Վին Պարսիկ, Անդիկան զօրավուխ,  
Հազարաւուխտ, Դմաւունդ վաւեմական,  
Վահրին, և ասոնցմէ ետու՝ գումանդ  
Շապուհ, Դեհկան Նահապետ, Սուրէն  
Պահլաւ, Ապական Վաւեմական, Զիկ  
նուիրակապետ, Հրեւշդոմ, Ալանայո-  
զան, Բյեկան, Վաշական, Մշկան,  
Մարտճան, Զինդկապետ զօրավուխ,  
Սակստան անզերձապետ, Շապստան

տակառապետ, և Մռիկան, և այլք, զորս  
Շապուհ կը յոշէ ՚ի Հայս՝ նուաճելու և  
գերելու, և փոխադրելու ՚ի Պարսս բո-  
լոր Հայաստանի ճոխութիւնքն : Այս-  
շափ կոտորածոց և պատերազմաց ար-  
դիւնքն ի՞նչ եղան. աւերակ Հայաստանի  
և ամայութիւնն, և ոչինչ աւելի . յոդնե-  
ցաւ երկիրն ՚ի սրոյ, արեամբ յագեցաւ,  
բազուկներն լքան և սրտերն մաշեցան.  
սկսան մարդիկն իրարու հարցնել, ի՞ն-  
չո՞ւ է որ այշափ պատերազմներ կը  
միշտ անպատճառ . շինութիւն չկայ,  
մնոնդ պակսեցաւ, և բոլոր Հայա-  
ստան բնաշինջ ըլլալու վրայ է անօդուտ  
տեղ : Եւ ասոր հետևեամբ, ապստամ-  
բութիւնն մը ծագեցաւ ՚ի բովանդակ  
Հայաստանի, Նախարարներն գլուխ  
քաշեցին, սկսան իրենց կենաց ապա-  
հովութեան մէկմէկ խորշեր բնտառել և  
թողուցին զԱրշակ միայն՝ որ պատե-  
րազմի ՚ի տոյս անձին Պարսկային  
գումարտակաց հետ : Միայն Վասակ  
կար հաւատարիմն արբային, և արբու-  
նական սունն մերձ ՚ի շիշանել : Երե-  
սոն և չորս տարի անընդհատ արիւն.  
հեղութիւնք նիհարեցուցին զարբու-  
նական սունն Հայոց, և որուն փօխարէն  
սարսափիւի եկը մը վճարեց և յագեցաւ  
պարսիկ օխութիւնն . և երբ Շապուհ իր  
գիմաց տեսաւ զԱրշակ զթայած, բայց  
ոչ թէ պարտութեամբ կամ գերու-  
թեամբ, այլ իսարդականօք, խնդաց և  
ըսաւ . Ահա հիմայ առնուում պիտի երե-  
սոն տարուան պատերազմացդ վրէքը .  
« այս լի երեսուն ամէն զի պատերազ-  
մեցար բնդ իս » :

Փոխէ փանդուանդ ձայնը, ով հագներ,  
գու, փոխէ յաւելի սգաւոր ձայն և ՚ի  
տիսուր, և յուղարկաւոր գնա գու ալ  
ընդ Արշակայ յանդարձ երթ . խարէա-  
կան հրաւելքը մը կը շարժէ զինքն,  
միանդամայն և յիւրոյ զօրականէն պա-  
ղութիւնն և սոսամբակութիւնն, և կը  
քայլափոխէ ՚ի յաւետենական ճանա-  
պարհն : Վասակ և շատ նախարարք  
ճանապարհակից էին Արշակայ, երբ  
չըովլ հասաւ առ զազրաթորմի միխրա-  
պաշտն : Ուրախացաւ Շապուհ որ ա՛լ

Արշակ իւր ձեռաց մէջն էլ գերի , և Հայաստան իրեն որս . կանչեց 'ի խոր . հուրդ զիտիթս , զաստեղագէտս և ըզ-քաւզեայս , թէ ինչ փոխարէն և ինչ տուգանք հասցունեն Արշակոյ : Մտա-ծեցին անոնք և խորամանկ խորհուրդ մը խորհեցան որով զԱրշակ ինքնին իւր բերնովն որսան Պարսիկ և հայ հողով զանազան յատակ ձևացունեն , և փոր-ձեն թէ ինչ ձայն ածէ Արշակ իր հո-դոյն վրայ և ինչ 'ի Պարսիկն : Եւ իրաւ-ցընէ յաջողեցան Պարսիկ կախարդաց գիւտքն . Արշակ հայ հոդոյն վրայ կը սպառնայր , կը մեծարանէր . իսկ Պար-սից հոդոյն վրայ ամենեին խոնարհ ե-րևութով միշտ 'ի զջումն կու գայր : Այս Պարմանալի կախարդութեամբ փոր-ձեց Շապուհ զԱրշակ , իմանալու հա-մար թէ արդեօք ինչ կերպ պիտի բռնէ իրեն հետ երր զինքն Հայաստան դար-ձունէ . և իմացաւ որ Արշակ նոյն իսկ 'ի գերութեան պահած էր իր իրոխտ ողին և աղդասէր բարդն : Հրամանյց որ Անյուշ կամ Անուշ , կամ Անդրէլ կամ Բնագմէշն բերդն փակեն զանիկայ , և վասակայ անոր կտրիճ զօրավարին մորթն հանել և զնել նոյն բերդն : . . .

Թէպէտ Արշակ հեռացաւ 'ի Հայաստա-նէ և յիւր ալթուոյն , Պապ թագաւորն կը վարէր զիշանութիւնն , և փոխա-նակ վասակայ 'Մուշերն քան զնա ա-րիագիսն կը դողացնէր զՊարսս : Ա'լ ա-ւելի սասակացաւ Հայոց վրէժինդրու-թիւնն՝ երր ունեցան Մուշերի նման կտրիճ մը , որ կինար բոյր ոխացեալ վրիժուց բարկութիւնն հանել 'ի Պար-սից . և որ երդուեալ էր խնդրելու Ար-շակայ վրէժն մինչեւ ցկամթիլս արեան : Դեռ ողջ էր Արշակ 'ի Մոռացութեան բերդին՝ երր 'ի Հայաստան կը վառէր նորէն պատերազմաց բոյն . կը լսէր ան-շոշտ և Արշակ և սրտէն արիւն կը վա-զէր : . . . Ներքինի մը 'ի Հայոց Դրաս-տամատն՝ որ կ'իշխէր Անգեղբերդին և Բնարեցայ 'ի ծոփի շատ արզիւնք ստա-ցեր էր և համբաւ հապհոյ առջեւ , մին-չեւ զցապուհ 'ի մահուանէ ալ ազատեր էր անգամմը 'ի պատերազմին Պարսից

ընդ Քուշանս , Շապուհ ուղեց փոխարէն մը տալ այս արդիւնաւոր անձին , ուստի հրամայց որ ինչ ալ ուղեց տայ իրեն անյապաղ : Կշուց , չափչիեց Դրաստա-մատն և միայն մի բան ինդրեց , բայց ինդիլք մը , որ վերջին անգամմ մ'ալ տեսնէ զԱրշակը Անյուշեց բերդին , և առանց շղթայիցն անոր ծառայէ անգամմ մը միայն . թէպէտ օրէնք չկար բանալ զբերդն և ոչ ումեր , բայց չկրցաւ Շա-պուհ զանալ իրեն ազատարարին ա-զաւանքն , և հրաման տուաւ որ բացուին Դրաստամատին առջև բերդին գռնեն , և ինչ որ ուղեց թող ընէ Արշակայ և խօսի : Իսկ Դրաստամատն այս հրա-ման ընդունելով մտու 'ի բերդն , Ար-շակայ շղթաները լուծեց , հագուեցոց սգուեցոց զնա ալբոնի պաճուճանգք , և գեղեցիկ բայց տխուր կոչունք մը հրամայց նոյն յաւերթայիշատակ բեր-դին մէջ . ինքն անձամբ կը բաշխէր և կը մատուակէր և կ'արբեցունէր զար-քայն 'իր սիրելի տէրն երբեմն և հրմայ զերին կալանաւորեալ : Յիշեց Արշակ իր նախնի փառքն , քաղցր յիշատակը և հայրենի յուշարարը երիւու կողմէն խառն խօսուեցան , և հազիւ Արշակ այս յետին բառերն արտաքերեց : « Վայ ինձ Արշակայ . այս ե՞ս և այս , և յայսմ շա-փու և այս անցք անցին ընդ իս և . . . ըսաւ , և կերակրոյն դանակին քաշեց հարուածեց միանգամ 'ի սրտին և ըն-կաւ . տիրասէր ներքինին չապասեց . ա-ռաւ նոյն դանակն և զինքն ալ զիակ-նացոյց իր տիրոյն մարմնոյն քով : Այս-պէտ Արշակ և Դրաստամատն վճարեցան նոյն Անյուշ բերդին մէջ : . . . Բայց թե-րևս , հագնենրդուդ , դիշացանց վէպ մը երեայ այս քեզ , և ըսես որ հայն ստեղ-ծեր և շիներ է . կարդա յօյն հեղինակ մը՝ որ զայս բառ առ բառ կը պատմէն նման ամենենին բիւզանդայ պատմածին , և կ'ըսէ ալ թէ 'ի Հայոց պատմութենէն առած ըլլայ զայր . և զայս պատմող Հայոց պատմութիւնն ունինք մենք հի-մայ զիիւզանդ : և յոյն մատենազգիրն և պատմին է Պրոկոպիոս , Քրիստոսի վե-ցերորդ գարուն առաջին կիսուն ծաղ-

կեալ։ Այս ուղելով Անցյուշ բերդին պատմութիւնն ընել, մէջ կը բերէ մեր Արշակայ գէսկրն այսպիսի օճով։

«Եղեւ երբեմն անազդ և անքարող պատերազմ՝ Պարսից ընդ Հայու ամս երեսուն և երկու, 'ի ժամանակս Բակրոյ՝ որ թագաւորէրն Պարսից, և Հայոց Արշակ Արշակունի։ Եւ յերկարել պատերազմին՝ դէպ լինել վատժարել երկոցունց ևս կողմանց, այլ առաւել Հայոց։ Եւ անհաւատարմութեամբ մեծաւ լեալ սոցա առ միմեանս, ոչ ոք յերկոցունց իշխէր խօսել՝ 'ի խաղաղութիւն։ Զայնու ժամանակաւ դէպ լիներ Պարսից՝ պատերազմ՝ Հարկանել ընդ այլ խուժագուժ, որ ոչ բացականք յոյժ էին 'ի Հայոց։ Ա.Ջ. ազգին Հայոց փոյժ 'ի մտի եղեալ յայտնի առնել զբարեմութիւն իւրեանց առ Պարսիկս՝ անդէն 'ի սահմանն բարբարոսաց ասպատակել խորհեցան, զգացուցեալ զայն Պարսից յառաջոյն։ Եւ յեղակարծումն յարձակեալ 'ի նոսա՝ գրեթէ զամենայն հասակ կոտորեցին։ Իսկ Բակրոյ զուարժացեալ յոյժ ընդ իրսն, յիշեալ առ Արշակ յիւրոց խորհրդակցացն և հաւատարիմ։ ցուցեալ զբանն զայրն կոչէր առ ինքն։ Իրբեւ չոգաւ Արշակ՝ մեծաւ ուրախութեամբ ընկալեալ զնա, և իրբեւ զիւր եղբայր՝ հաւասար ինքեան համարէր։ Եւ յայնժամ երդմամբ զԱրշակ կաշկանդէր, և ինքն իսկ երդնոյր, զի Հայր և Պարսիկը յայսմ հետէ լինիցին նիշակակիցք և սիրելիք միմեանց։ Ապա արձակեաց զնա 'ի հայրէնիս։

Իսկ յետ ոչ բազում ժամանակաց շարիսու եղեն ոմանք զարբայէն Արշակայ (Արտաշէ) առ Բակուր, իրբեւ զի ապստամբութիւն խորհի նա ընդդէմ իւր։ Որում ունկն մասուցեալ Բակրոյ՝ վաղվազակի առ ինքն տապը կոչել զԱրշակ, պատճառեալ՝ եթէ զիրաց ինչ հասարակ միաբան խորհեցին։ Իսկ Արշակայ ոչ ինչ զեգերեալ հասանէր առ նա, ածեալ ընդ իւր և զայլս ընսիրս 'ի Հայոց, և զվասիկոս (Վասիկոս) որ խորհրդակից և զօրավարն էր, զանցեալ զամեներումիք իմաստութեամբ և

արութեամբ։ Իսկ Բակուրիոս (Պահութիւն) զերկոսեան իսկ՝ զԱրշակ և զԼասիկիոս կշտամբեաց բանիք նախատանց, զի այդպէս վաղվազակի զերդմամբն անցանիցեն և յապստամբութիւն մոտաբերիցեն։ Իսկ նորա յուրաստ կային, և երդուուին ստէպ եթէ ոչ երբեք խորհեալ իցէ նոցա զայսպիսի ինչ։ Արդ նախ զնոսա բակուրիոս անպատուեալ՝ 'ի պահ արկ, ապա զմողն եհարց՝ եթէ զինչ առնել իցէ նոցա և եւ մոդուցն ասացեալ՝ եթէ չիցեն իրաւունք գատապարտ առնել զայն՝ որ ուրանանն և ոչ յայտնի ամբաստաննեն զի բեանց մեղանացն։ և հնարս ինչ ամին զմուա՛ եթէ որպէս Արշակ իւրովի ընդդէմ անձին ամբաստան լինել ստիպկից։ Զի զարունական խորանին զյառակն շաղախով ծածկել հրամայեցին, զկէնն՝ 'ի Պարսից երկրէն, և զմիւ կէնն Հայոց։ և թագաւորն առնէր ըստ բանիցս Յայնժամ մողքն վխորանն ամենայն կախարդանօք իմն զիւթեալ, խորհուրդ ետունարբային՝ ընդ Արշակայ ճեմ առնուլ անզանօր։ և խնդրեալ՝ զի խոստմանցն և դաշանցն նենդեսցէ։ և թէ պարտիցէ և ինքեանց լինել բանիցն առաջիկայ, զի լիցին վկայք բանիցն ամենայնի։ Արդ միւսանդամ կոչեալ Բակրոյ զԱրշակ՝ երթնեկս առնէր ընդ նմա 'ի խորանի անդ։ էին անդը մօտ և մողքն։ և հարցանէր զայրն՝ թէ էր վասն զերդմամբքն արհամարհեալ ձեռն էարկ միւսանդամ՝ զՊարսիկս և զՀայս անհնարին շարեզք մաշել։ Իսկ Արշակ, ցորչափ բանքն լինէին 'ի տեղովն՝ ուրհողն էր պարսկական, յուրաստ կայր, և սասալիկ երդմասիք պնդէր 'ի ծառայութեան կալ Բակրոյ հաւատարիմ։ Եւ իրբեւ ընդ խօսելն զայս՝ հասանէին 'ի միջոց խորանին, ուր 'ի շաղախն մաին Հայաստանեաց, անդանօր ոչ զիտեմ յութեան կալ Բակրոյ հաւատարիմ։ Եւ իրբեւ ընդ զայս՝ հասանէին Հայաստանեաց, անդանօր ոչ զիտեմ յութեան զրգուեալ՝ զբանն յեղակարծումն 'ի յանդզնագոյնն շրջէր։ և ոչ դադարէր 'ի սպառնալոյ Պարսից։ Ա.Ջ. զիւթէ խնդրել խոստանայր զմբընամանաց այսոցիկ, որպէս վաղվազակի լինիցի տէր անձին։ և զայս ասա-

ցեալ խակոթեամբ, և զճեմնն վճարէր, մինչև զարձ արարեալ անդրէն՝ ՚ի Պարսից երկրի ՚ի շաղախն հասանէր. և անդանօր զարծեալ զնոյն ձայն ածէր ծառայ լինէր և ցաւագին իմն բանս առակուր բարբառէր : իսկ իրու եկն դարձեալ ՚ի հայ հողն, սկսաւ ՚ի սպառնալին, և ոչ ինչ ՚ի գաղտննեաց պահեաց ՚ի սրտին : Յայնժամ մոդքն դատապարտ արարին զնա՝ զի ու խստիցն և երդմանցն դրժեաց : իսկ թակուրիոս զմորթն վասիկիոսի եհան, և տիկ գործեալ զնա՝ ելից յարդիւ, և կախեաց զնա՝ զծառոյ իմեքէ գրարձուէ. և զԱրշակ (քանզի զարիւն արքայի չիշխէր սպանանել) ՚ի բերդն Մոռացութեան արգել և փակեաց :

Եթե ժամանակաց ոմն ՚ի Հայոց, ՚ի հաւատարիմ արանց Արշակայ, և որ ընդ նման չողաւ ՚ի Պարսս, զննուորեցաւ ընդ Պարսիկս ընդդէմ խուժադուժ ազգի միոց : Եւ զի առաքինացաւ այրն յայս գործ պատերազմին առաջի Բակոյ, և եղև պատճառք յայիթութեան Պարսից, աղաչէր զնա բակուր՝ զի խընդրեացէ ՚ի նմանէ զոր ինչ և կամեսցի, և խոստանայր ոչ ինչ զլանալ ՚ի նմանէ : իսկ նա ոչ այլ ինչ ինդրեաց, բայց օր մի միայն ծառայել Արշակայ՝ որպէս և կամիցի ինքն : Զարմացաւ զի զայն պիսի հին օրէնսն բռնադատէ լուծանել. այլ զի ամեննեին ՚ի խոստանանն կայցէ, թոյլ ետ կատարել Հայուածոյն : Եւ ըստ հրամանին աքայի իրու եհաս

յինյուշն բերդ, ողջունէր՝ զԱրշակ, և գիրկընդիսառն լեալ. զմիմեամբք աղողորմ հեծեծանգք լային և ողբային զաւաջիկայն բաղդ, և հաղիւ տային միմեանց զայ հրաժեշտի :

Եւ իրու զաղարեաց լալինն՝ լուաց Հայն զԱրշակ, և խնամով զարդարեաց զնա . և արկեալ զնովաւ պատմուան արքունի՝ արկ նման բաղմականս : Այս պէս ընդունէր Արշակ զեկեալսն առինքն արքունի շքով՝ որպէս սովորեալն էր յառաջագոյն : Ի խնջոյս անդ բազում բանք եղեն զկնի գիներբռուացն, հանցականք Արշակայ. անկան ՚ի մէջ և այլ բազում խօսք՝ ընդ որ յոյժ բերկրեցաւ նա : Եւ յերկարել գիներբռուացն մինչև ՚ի զիշեր, և խօսակից լինելով ընդ միմեանս բերկրէին : իրու այն ինչ հեռացեալ լուծան ՚ի միմեանց հեշտութեամբ ողողեալ, յայնժամ պատմի ասացեալ Արշակայ . Ի քաղցրագոյնն աւուրց վայելեալ յորս տեսի զցանկալին քան զամենեսին այր, ոչ է այլ ՚ի գէպ բառնալ զարէտո վշտացս : Եւ զայս ասացեալ՝ սրով անձին արար, զոր ՚ի սեղանոյ անտի խնջոյիցն գողացեալէր . այսպէս ՚ի մարդկանէ վճարեցաւ նա : Զայսոսիկ յաղագս Արշակայ ասէ պատմութիւնն Հայոց (τών Ἀρμενίων συγγραφή), որ ինչ ասացաւ, և զօրէնսն որ վասն Անյուշ բերդին » :

Հ. Արտէն Սուսրուան